

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

*Ի ՏՊԽԻՍ*

Կայսերական Փոխարքայի ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

*Խոնարհաբար խնդրեմ ի Պայծառափայլութենէ Ձերմէ արկանել առ ոտս* ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ *Թագաւոր Կայսեր զգացմունս խորին վշտի միաբանութեան Մայր Աթոռոյս և համայն հայ հոգևորականութեան վասն մահու Մեծ Իշխան Վլադիմիրի Ալէքսանդրովիչ։ Ի շաբաթու ի տաճարի ս. Էջմիածնի կատարեսցի հանդիսաւոր հոգեհանգիստ։*

*Տեղակալ Կաթուղիկոսի ամենայն հայոց*

**Գէորգ Արքեպիսկոպոս**

*29 Փետրուարի 1909 ամի*
*ի ս. Էջմիածին.*

ԷՋՄԻԱԾԻՆ.

Տեղակալի Պատրիարք Կաթողիկոսի Գէորգ Արքե-պիսկոպոսի.

Յամենահպատակ զեկուցման Ստատս-Սեկրետար Բարոն Նոլդէի, որ արտայայտեաց զիմաստ հեռագրի Ձերոյ 19 փետր. յանուն իմ. ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆ բարեհաճեցաւ ձեռամբ իւրով մակագրել «անկեղծ շնորհակել եմ վասն վշտակցութեան»:

Զայսմանէ ծանուցանեմ Բարձր Սրբազնութեան Ձերում.

Գեներալ-Ադիւտանտ Կոմս Վորոնցով-Դաշկով:

23 փետրուարի 1909 ամի:

## ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

— Ց 30-ն յունուարի Սինօդ լուեալ զ.յայտարարութիւն Կոնսիստորիային Երեւանայ, որով խնդրէ զմիաբան ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Երեւան քաղաքի Գէորգն Տէր Աստուածատրեան ազատ համարել ի սարկաւագութենէ, հրամայեաց. արձակել զԳէորգ սարկաւագն Տէր Աստուածատրեանց ի հոգեւոր կոչմանէ բառնալով ի նմանէ զկարգ սարկաւագութեան և զայմանէ ծանուցանել Նահանգապետին Երեւանայ ի գիտութիւն: Թ. 71

— Ի նմին աւուր Սինօդ լուեալ զգործ ձեռնադրութեան ընակչի Ցամաքաբերդ գեղջ գաւառին Նոր-Բայազիտի Միքայէլի Տէր Սահակեանց, որ ստացեալ է վկայական երկրորդ դասարանի Թեմ. դպրոցի Երեւանայ հրամայեաց. թոյլ տալ Կոնսիստորիային Երեւանայ ընդունել զՄիքայէլն Տէր Սահակեանց ի հոգեւոր կոչումն վասն ձեռնադրելոյ զնա ի քահանայ Ցամաքաբերդ գեղջ: Թ. 67

—Ց 31-ն նոյն ամսոյ Սինոդ լուսեալ զգործ պսակի բնակչաց Գրամփա գեղջ գաւառի Վաղարշապատայ հրամայեաց. թոյլ տալ զպսակ Թադէոսի Ղազարեան ընդ Հռիփսիմեայ Սարգսեան ի վեցերորդում աստիճանի ազգակցութեան հանդերձ խորդութեամբ ի հօրէ և ի մօրէ։ Թ. 74

—Ց 2-ն փետրուարի Սինոդ լուսեալ զգործ պսակի բնակչի Արգուինի Գրիգորի Պելինեան ընդ Սիրանոյշի Մամասեան հրամայեաց. թոյլ տալ զպսակ Գրիգորի Պելինեան ընդ Սիրանոյշի Մամասեան ի հինգերորդում աստիճանի խնամութեան։ Թ. 78

—Ի 10-ն փետրուարի Սինոդ լուսեալ զյայտարութիւն Կոնսիստորիային Աստրախանի ի 16-ն դեկտեմբերի անցելոյ ամի Թ. 361, որով յայտ առնէ եթէ ծխականք Աստրախանի առանձին արձանագրութեամբ որոշեալ են յատկացուցանել ի գումարաց ս. Աստուածածին եկեղեցւոյ քաղաքին զ2000 ռուբլիս ի լրումն արարեալ ծախուց և ի դէպս անհրաժեշտ վերանորոգութեան հրամայեաց. թոյլ տալ ծխականաց Աստրախան քաղաքի ծախել ի դրամագլխէ ս. Աստուածածին եկեղեցւոյ քաղաքին զերկու հազար ռուբլիս յաւարտ շինութեան հոգևոր դպրանոցին թեմին։ Թ. 84.

— Ի նմին աւուր Սինոդ լուսեալ զգործ ձեռնադրութեան բնակչի Փոքր–Քեափանակ գեղջ գաւառին Ալեքսանդրապոլի Մկրտչի Տէր Ղազարեան, որ ունի վկայական երկրորդ դասարանի թեմական դպրանոցին Երևանայ հրամայեաց. թոյլ տալ Կոնսիստորիային Երևանայ ընդունել զՄկրտիչն Տէր Ղազարեան ի հոգևոր կոչումն վասն ձեռնադրելոյ զնա ի քահանայ Փոքր–Քեափանակ գեղջ։ Թ 85

Ի 11-ն փետրուարի 1909 ամի ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայց Սինոդի Սրբոյ Էջմիածնի լուսան զգեկուցումն. Ցաւարտեալ գործոց Դատաստանական Մասին Սինոդիս Թ. Թ. 47|901, 40|902, 23|906 և 20|908 երևի նախ՝ (գործ 47|901) զի Մեսրոպ քահանայն Տ. Ռոկանեան և այլ ինն քահանայք Բագու քաղաքի մեղադրին

յանկանոն վարման մետրիքական մատենից։ Լուեալ Սինոդիս զգործս և ի նկատ առեալ զԱմենաողորմած հրովարտակն ի 11-ն օգոստոսի 1904 ամի, օրագրաւ ի 25 նոյն օգոստոսի ըստ զօրութեան 1 կ. 12 § նոյն հրովարտակի կարճէ զգործս զայս։ Երկրորդ՝ (գործ 40|902) Սինոդս օրագրաւ ի 25-ն Նոյեմբերի 1902 ամի վճռէ արկանել զՄեսրոպ քահանայն Տ. Ոսկանեանց ընդ միամեայ եկեղեցական ապաշխարանօք վասն անպատուելոյ նորա զԱրգար քահանայն Տ. Յարութիւնեանց անվայել հայհոյանօք։ Ապա ի նկատ առեալ Սինոդիս զըմբոստութիւն և զխուսափումն Մեսրոպայ քահանայի ի կատարմանէ սահմանեալ պատժոյն, օրագրաւ ի 23 յուլիսի 1903 ամի վճռէ փոխել զմիամեայ ապաշխարութիւն նորա յերկամեայ ապաշխարանս։ Իսկ օրագրաւ ի 16 սեպտեմբերի 1906 ամի կարճէ զայս գործ՝ ունելով ի նկատի, զի Մեսրոպ քահանայն Տ. Ոսկանեանց ըստ վկայութեան յայն ժամու գործակալին Բագուայ՝ Մաթէոսի վարդապետի, կատարեալ է արդէն զհրաման Սինոդիս, որ վասն եկեղեցական ապաշխարութեան։ Երրորդ՝ (գործ 23|906) վասն երկիցս խանգարելոյ Մեսրոպայ Ա. քահանայի Տ. Ոսկանեանց զժամերգութիւն և կատարելոյ նորա զպսակ մի յաններելի ժամու (զկնի երեկոյեան ժամերգութեան հինգշաբթի աւուր՝ յ9 փետրուարի 1906 ամի, որ լուսանայր ուրբաթ) Սինոդս օրագրաւ յ13-ն յուլիսի 1907 ամի հաստատէ զեզրակացութիւն Կոնսիստորիային Շամախւոյ, որ վասն պահանջելոյ Մեսրոպայ Ա. քահանայէ Տ. Ոսկանեանի զերեսուն ռուբլիս յօգուտ որբոց և այրեաց աղքատ հոգևորականաց։ Եւ չորրորդ՝ (գործ 20|908) Սինոդս օրագրաւ ի 28 մարտի անցելոյ ամի, ըստ յայտարարութեան և հեռագրի Կոնսիստորիային Շամախւոյ, որ վասն անհնազանդութեան և ազգի ազգի անկարգութեանց և անվայել արարմանց Մեսրոպայ Ա. քահանայի Տ. Ոսկանեանց, վճիռ հատանէ դադարեցուցանել զնա ի քահանայագործութենէ և առաքել յապաշխարութիւն ի վանս Սևանայ վեցամսեայ ժամանակաւ։ Ապա Սինոդս զիջեալ

ի հիւանդապին վիճակ Մեսրոպայ Ա. քահանայի Տ. Ոսկանեանեանց ըստ վկայութեան բժշկաց, օրագրաւ ի 6-ն յունիսի 1908 ամի վճռէ՝ առաքել զնա, յապաշխարութիւն ի վանս Հաղպատայ վեցամսեայ ժամանակաւ փոխանակ վանուցն Սևանայ։ Ցեռ այսորիկ Սինոդս ի 5 սեպտեմբերի նոյն ամի, թ. 2261, առաջարկէ Կանոնիստորիային Հայոց Վրաստանի անյապաղ առաքել զՄեսրոպ Ա. քահանայն Տ. Ոսկանեանց Բաղու քաղաքի, որ յանժամ գտանէր ի Տփխիս քաղաքի, ի տեղի ապաշխարութեան նորա՝ ի վանս Հաղպատայ, ծանուցանելով քահանային, եթէ խնդիր նորին ի 26-ն յուլիսի 1908 ամի, թ. 85, յանձնեալն Սինոդիս մակագրութեամբ Տ. Տեղակալի Աստենապետի Սորին, որ վասն թողլոյ զնա ըստ խորհրդոյ բժշկայ ի Տփխիս կամ ի Պետերբուրգ քաղաքս, թողեալ է ի Սինոդիս առանց հետևանաց։ Ի նոյն սեպտեմբեր ամսեան ընկալեալ լինի ի Սինոդիս յայտարարութիւն Կանոնիստորիային Շամախւոյ ի 5-ն սեպտեմբերի, թ. 1066, որով յայտ առնէ, ըստ գրութեան Կանոնիստորիային Հայոց Վրաստանի, եթէ Մեսրոպ Ա. քահանայն Տ. Ոսկանեան հրաժարի ի կատարելոյ զհրաման հոգևոր իշխանութեան, ուստի և խնդրէ զտնօրէնութիւն Սինոդիս վասն զսպելոյ զքահանայն ի գալ ի հնազանդութիւն և ի կատարումն կարգադրութեան հոգևոր իշխանութեան։ Ընդ նմին կցորդէ եթէ Մեսրոպ Ա. քահանայն և յառաջին ժամանակս յենթարկելն եկեղեցական ապաշխարանաց վասն օրինազանց գործողութեանց՝ խուսափեալ է ընդ միշտ ի կատարմանէ, կամ դիմելով յոտս ի Տէր հանգուցեալ Կաթուղիկոսի՝ արժանացեալ է ներողամտութեան նորին, և կամ մեկնեալ ի Բաղու քաղաքէ առանց անցագրի՝ անցուցեալ է զժամանակս ապաշխարութեան յայս և յայն քաղաքի։ Առ այս Սինոդս ի 24-ն նոյն սեպտեմբերի, թ. 2447, առաջադրէ Կոնիստորիային Հայոց Վրաստանի ի լրումն ի վերս անդր յիշատակեալ պատուէրի սորին, ի դէպս հակառակելոյ Մեսրոպայ Ա. քահանայի Տ. Ոսկանեան ի կամովին կատարումն հրամանի Սինոդիս յ 17 յունիսի

1908 ամի, Թ. 1635, առաքել զնա ի տեղի աշխարհութեանն ի ձեռն ոստիկանական իշխանութեան և զկատարածէն տալ տեղեկութիւն Սինոդին։ Զայսմանէ Սինոդս տայ գիտել նաև Կոնսիստորիային Շամախւոյ։ Յետ այսր ամենայնի ժամանակաւոր պաշտօնակատար փոխ-թեմակալին Հայոց Երևանայ ի 5-ն Նոյեմբերի 1908 ամի, Թ. 779, յայտ առնէ, եթէ գաւառապետին Բոգուայ առաքեալ է յԵրևան Մեսրոպ Ա. քահանայն Տ. Ոսկանեան վասն յղելոյ զնա առ գաւառապետն Նոր Բայազիտի ի յանձնել վանահօր Սևանայ վանուց յապաշխարութիւն վեցամսեայ ժամանակաւ ըստ վճռոյ Սինոդին։ Սակայն վասն չքաւորութեան և հիւանդութեան քահանային զառաքումն նորա, ըստ կարգադրութեան նահանգապետին, յանձնէ Փոխ-Թեմակալին Երևանայ, որոյ խնդրեալ է ի կառավարչէ հիւանդանոցին Երևանայ ընդունել զՄեսրոպ Ա. քահանայն ի հիւանդանոցն ցապաքինումն. իսկ կառավարիչն այն պատասխանի արարեալ է, եթէ անհնարին է ընդունել զնա ի հիւանդանոցն։ Ուստի ժամանակաւոր պաշտօնակալ Փոխ-Թեմակալին զգրագրութիւնն զայն առաջի առնէ ի տնօրէնութիւն Սինոդին։ Ձև ևս արարեալ տնօրէնութիւն ինչ ի Սինոդին՝ ընկալեալ լինի գրութիւն Գ. Պրօկուրօրի Սրբին ի 23 նոյն Նոյեմբերի, Թ. 233, ընդ որում առաքելով զերկուս խնդիրս Մեսրոպայ Ա. քահանայի Տ. Ոսկանեան հանդերձ նամակաւ որդւոյ նորին և պատճէնի յայտարարութեան նոյն քահանայի յանուն գործակալին Բոգուայ, խնդրէ ի Սինոդէս արտաքոյ կարգի ի քննին առնուլ զխնդիր յիշեալ քահանային և ի դէպս հնարաւորութեան բաւարարել զայն, քանզի ի պատճառս հիւանդագին վիճակի նորին և ոչ գոլոյ արդեանց կենցաղոյ չիք հնարաւորութիւն կեալ ընդ երկայն յԵրևան քաղաքի։ Յառաքեալ թղթոցն երևի, զի Մեսրոպ Ա. քահանայն ընդ խնդրագրի յ 17 նոյն Նոյեմբերի մատուցանէ Գ. Պրօկուրօրի Սինոդին զգրքոյկ իւր՝ «բողոք» խորագրաւ, և յայտ առնէ, եթէ պարտ էր ինքեան կրել զսահմանեալ վեցամսեայ ապաշխարութիւնն ի վանս Սևանայ, սակայն

ի պատճառս ծանր հիւանդութեան իւրոյ մնայ. ի Տփխիս քաղաքի և զվկայական բժշկաց ի 14 մայիսի 1908 ամի առաջի առնէ Տ. Տեղակալի Սինոդիս, խնդրելով առաքել զինքն յապաշխարութիւն փոխանակ վանուցն Սեանայ՝ ի վանս Ծիրանաւորի, որ մերձ ի Տփխիս. Ե 12-էն մայիսի 1908 ամի ց 12 նոյեմբերի տարւոյն կեցեալ է ի Տփխիս քաղաքի, որով և լրանայ վեցամսեայ շրջան ապաշխարութեանն. Ապա յիշատակելով զմատուցեալ յանուն Պ. Պրոկուրորի. Տ. Տեղակալի և Սինոդիս զխնդրագիրս իւր, հայցէ զուշադրութիւն նորին ի վերայ այնոցիկ՝ վասն շատ համարելոյ զկրեալ տանջանս և զզրկանս և վերադարձուցանելոյ առ թշուառացեալ և մայրազուրկ զաւակունս իւր. Մեսրոպ Ա. քահանայն յայտարարութեան ի 11 մայիսի անցելոյ ամի յանուն գործակալին Բագուայ տայ տեղեկութիւն զմեկնելոյն դէպ յաքսորավայր իւր և ընդ նմին յայտնէ, եթէ զծխականս իւր յանձն առնէ Արշակայ քահանայի Տ. Ոսկանեան և ոչ այլուստ ի քահանայիցն Բագուայ, յորս ոչ վստահի՝ զանցնել ամաց զփորձն ունելով առաջի աչաց. Եժաւոն անուն որդին Մեսրոպայ Ա. քահանայի գրէ նամակ յանուն հօր իւրոյ ի 20 հոկտեմբերի 1908 ամի, յորում՝ նկարագրելով զդիպեալ ձախորդութիւնս և զկարօտ վիճակ իւր և իւրայնոցն, այն է զկարօտ վիճակ ուսանող քեռն ի Պետերբուրգ քաղաքի, զմտանգ տրձակման իւրոյ ի գիմնազիոնէն ի պատճառս անվճար մնալոյ թոշակին, զպահանջ վարձու բնակարանի իւրեանց, զլքեալ վիճակ խոսեցեալ քեռն և զափշտակութիւն ծխականաց հօրն ի ձեռն քահանայից քաղաքին, խնդրէ փութալ՝ դարձ առնել անդրէն ի Բաքու, ուր ժամանեալ էր ի ժամանակիդ առաջնորդ թիկմին վասն խնդրելոյ ի նմանէ շատ համարել զկրեալ ապաշխարութիւնն և առհասարակ կարգաւորելոյ զընտանեկան գործս իւր. Մեսրոպ Ա. քահանայն ի 20-ն նոյեմբերի 1908 ամի յայտառնէ Պ. Պրոկուրորին, եթէ ընկալեալ իւր զյիշատակեալ նամակ յորդւոյն՝ փութայ ի Բագու և տայ տեղեկութիւն գործակալին զվերադարձէ իւրմէ, խնդրելով զեկուցանել

Առաջնորդեն առ ի յանդիման լինել նմա. սակայն առաջ-
նորդն ի նմին իսկ աւուր ի ձեռն ոստիկանութեան տեղ-
ւոյն ձերբակալեալ զինքն՝ արտաքսէ անտի ի քաղաքն
Երեւան, ուր գտանի յընթացս միոյ ամսոյ։ Եւ պատմէ
զհիւանդագին և զանխնամ դրութիւն իւր. զորմէ արդէն
յայտնեալ էր Սինոդիս ժամանակաւոր պաշտօնակատար
փոխանորդին Երեւանայ։ Յաւելու, եթէ վարձեալ է զան-
յամար սենեակ մի վեց ռուբլի ամսավճարիւ և զփելդշեր
մի, որ յերկուս նուագս յաւուր այցելէ և բժշկէ զինքն,
բայց չունի դրամս հոգալոյ զծախս զայդոսիկ, քանզի զոր
ինչ ունէր՝ սպառեալ է ի պէտս բժշկութեան և սննդեան։
Հուսկ ապա Գ. Գրօկուրօր Սինոդիս. ի լրումն վերոյիշեալ
գրութեանն թ. 233, առաքէ էնդիր Մեսրոպայ Ա. քա-
հանայի Տ. Ոսկանեան ի 25 նոյն նոյեմբերի հանդերձ
բժշկական երկու վկայականօք, յորոց մին է պատճէն
վկայականի, մատուցելոյ Սինոդիս, իսկ միւսն տուեալ է
քահանային ի քաղաքային հիւանդանոցէն Երեւանայ յ 31
հոկտեմբերի անցելոյ ամի, թ. 451, որով վկայի, եթէ
նա տառապի պաբբերական (քրոնիկական) յօդացաւով
շատ աւելի աճեալ ոտիւ։ Խնդրարկու քահանայն յիշատա-
կելով զնախկին խնդիրս իւր յանուն Սինոդիս, հայցէ չտա
համարել զեօթնամսեայ ապաշխարութիւն իւր և թոյլ տալ
դառնալ առ ծխականս իւր. իսկ ի դէպս անհնարութեան-
թեան խնդրէ տալ ինքեան զարարեալ ցարդ վասն բժըշ-
կութեան զծախս իւր և յետ այսորիկ նշանակել կենսա-
թոշակ ցկատարեալ ապաքինումն և ապա թէ առաքել
զինքն յապաշխարութիւն՝ ուր հաճոյ իցէ Սինոդիս։ Առ
այս Սինոդս յ 3-ն դեկտեմբերի անցելոյ ամի, թ. 3029,
առաջադրէ Կոնսիստորիային Երեւանայ ծանուցանել Մես-
րոպայ Ա. քահանայի Տ. Ոսկանեան. որ յայնժամ գտա-
նէր յԵրեւան քաղաքի, եթէ ի նկատ առեալ Սինոդիս ըստ
վկայութեան բժշկաց զհիւանդագին վիճակ նորա, թոյլ
տայ նմա վերադառնալ ի քաղաքն Բագու ի տուն իւր
վասն ապաքինման՝ առանց պաշտելոյ զքահանայութիւն,
ցառանձին տնօրէնութիւն Սինոդիս։ Զայսմանէ տայ գի-

տել գործակալին Բագուայ յ 3-ն նոյն դեկտեմբերի և ի ձեռն նորին Կոնսիստորիային Շամախւոյ։ Իսկ յ 8-ն նոյն ամսոյ, թ. 3092, առաջադրէ նոյն գործակային առաջի առնել Սինոդիս զ՝ի լոյս ընծայեալ գրքոյկ Տ. Ոսկանեան քահանայի, «բողոք» խորագրեալ, այլ և քաղել զստոյգ տեղեկութիւնս և յայտնել Սմին, եթէ զինչ—ինչ գայթակղեցուցիչ արարս թոյլ տուեալ է յիշել քահանայի ի մէջ ժողովրդեան։ Ց 8 նոյն դեկտեմբերի ընկալեալ լինի ի Սինոդիս յայտարարութիւն Մեսրոպայ Ա. քահանայի Տէր Ոսկանեան № 92, որով նկարագրելով զգրկանս. հասուցեալս ինքեան ի քահանայիցն Բագուայ և ի Կոնսիստորիայէն Շամախւոյ, խնդրէ թոյլ տալ ինքեան քահանայագործել և կարգել զեղբօրորդի իւր՝ զԱշակ քահանայն, օգնական ինքեան և ուսուցիչ ի Բագու քաղաքի։ Իսկ ի հակառակ դէպս տալ ինքեան զպատճէն գործոյս, որով Կոնսիստորիայն համարեալ է զինքն յանցաւոր և Սինոդս ծանուցել է զկարգադրութիւն նորին օրինաւոր և հաստատելով զայն՝ ենթարկեալ է զինքն տանջանաց։ Այլ և խնդրէ տալ ինքեան զպատճէն այնր գոծոյ, որով քաղաքական իշխանութիւնն առաջարկեալ է զինքն վարձագրութեան չքանչանի, իսկ Սինոդս բացատրեալ է Տ. Փոխարքային, եթէ Տէր Ոսկանեանս քահանայն՝ իբրև զյանցագործ, չէ արժանի վարձագրութեան։ Զպատճէնս զայս պարտի նա առաջի առնել քաղաքական Բարձրագոյն իշխանութեան առ ի վերականգնել զանմեղ պատիւ իւր, զարատաւորեալն առաջի նորին։ Ապա ընկալեալ լինի յատարարութիւն Կոնսիստորիային Շամախւոյ ի 5 նոյն դեկտեմբեր ամսոյ, թ. 1399, որով յայտ առնէ, եթէ Մեսրոպ Ա. քահանայն առ ոչինչ համարելով զներողամտութիւն բարձրագոյն հոգևոր իշխանութեան, խուսափի ի կատարմանէ սահմանեալ ապաշխարութեանն, թափառելով մերթ ի Բագու և անվայել կոչման իւրում՝ ընթացիւք նախատինս բերէ անուան հոգևորականութեան։ Ի վերջոյ, որպէս յայտնէ գործակալն Բագուայ ի 24-ն հոկտեմբերի, թ. 871, վերադարձեալ էր նորա ի Բագու առանց ապաշխարելոյ

ըստ վճռոյ Կոնսիստորիային և Սինոդիս. իսկ քաղաքապետն Բագուայ գրութեանը յ 12 Նոյեմբերի 1908 ամի, թ. 23871, ծանուցանէ, եթէ առաքեալ է զՄեսրոպ Ա. քահանայն ի Բագու քաղաքէ առ գաւառապետն Երևանայ ի յանձնել վանահօրն Սեանայ. Յապացոյց սանձարձակ արարմանց քահանային Կոնսիստորիայն յառաջ վարէ զարտատպեալ ի «Նոր-Դարէ» ի «Մեր Ձայն» օրաթերթի յ 9 Նոյեմբերի № 125 զհետագայ յօդուածն. «Թիֆլիսում յայտնուել է մի նոր մուֆթի հայ քահանայի սքեմով, Բագուի արուարձաններում ծանօթ Մեսրոպ չիք — քահանայն Սեան սքսորուածը, Թիֆլիսում ամեն տեղ շրջում և հայհոյում է եկեղեցի. նրա խորհուրդները, պսակը, մկրտութիւնը, Ս. Մեռոնը, հոգևորականութիւնը և այլն և այլն, առաջարկում է նոտարով պսակուել. Եւ այս խելագարի բերանը փակող ոչ ոք չկայ, փարաջան հանող և միրուքը խուզող ոչ ոք չկայ. Հոգևոր իշխանութիւնը այդպիսի «մանր բաներով» զբաղուելու երևի ժամանակ չունէ.» Վասն այսորիկ Կոնսիստորիայն խնդրէ զտնօրէնութիւն Սինոդիս առ ի վախճան տալ անպատուաբեր արարմանց Մեսրոպայ քահանայի Տէր Ոսկանեան, որ յօրէ փոխադրութեան յԱնդր—Կասպեան երկրէ ի վէճակն Շամախւոյ ազգի—ազգի անվայել ընթացիւք և դայթակղեցուցիչ արարմամբք առիթ լեալ է անընդհատ անախորժութեանց. օրինակ չար դարձեալ է հոգևորականաց թեմին ի գայթակղութիւն ժողովրդեան.—Յաւելու ևս, եթէ, որպէս լսելի լինի, Մեսրոպ քահանայն հրատարակեալ է գրքոյկ ինչ՝ լի ափեղ ցիեղ գրուածովք առհասարակ ի դէմս հոգևոր իշխանութեան և մասնաւորապէս ի դէմս գործակային Բագուայ և Աբգարու Ա. քահանայի Տէր Յարութիւնեանց. Իսկ գործակալ Զաւէն վարդապետն հեռագրաւ յանուն Սինոդիս ի 14-ն նոյն դեկտեմբերի յայտ առնէ. եթէ ի նմին աւուր Տէր Ոսկանեան քահանան հակառակ կարգադրութեան Սինոդիս կատարեալ է զպսակ մի, ոյր սակս խնդրէ զտնօրէնութիւն Սորին. Յետ այսր ամենայնի ընկալեալ լինի ի Սինոդիս մակագրութեամբ Տ.

Տեղակալի Կաթուղիկոսի ամենայն Հայոց խնդիր Աբգարու Ա. քահանայի Տէր Յարութիւնեանց յ 17-ն նոյն դեկտեմբերի, ընդ որում մատուցանելով զհրատարակեալ գրքոյկ Մեսրոպայ Ա. քահանայի Տէր Ոսկանեան, վերտառութեամբ «Բողոք հայոց ազգին և իւր ծխականներին», բողոք բառնալ զքահանայէն վասն զետեղելոյ ի գրքուկին զայլ և այլ ստայօդ արարս և զյանցանս ի դէմս իւր և առ հասարակ անուանարկելոյ զհոգևորականութիւնն։ Յաւելու, եթէ Տէր Ոսկանեան քահանայն ոչ դադարի ի գըրգըռելոյ զժողովրդականս ընդդէմ քահանայից Բագուայ և եղբայր նորին հոյհոյէ զնոսա և սպառնայ սպանանել։ Վասն այսորիկ խնդրէ կարգել զոք ի քննել առ տեղւոյն զմեղադրանս, զորս բարդեալ է Մեսրոպայ քահանայի ի վերայ քահանայից Բագուայ, և զամենայն արարս նորին և ըստ այնմ արկանել զնա ընդ պատժով ըստ օրինի։ Մեսրոպ Ա. քահանայն Տէր Ոսկանեան ի գրքուկին ի միջի այլոց ասէ. «կարողէ լոյս սփռել մեր կղերական վարչութեան թանձրամած խաւարում կատարուած քստմնելի ու նողկալի իրականութեանց վրայ» (Ա. էջ. յառաջաբանի). «Թէ ինչպէս Շամախու թեմի առաջնորդ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանցը մատնեց ինձ. Բայց և ինքն մեղադրուեցաւ. Թէ ինչպէս իմ աղատուելուց յետոյ Համբարձում Մելիքեանի տանը Մեսրովբ արքեպիսկոպոսը ինքն իրեն արդարեցնելու համար գրեց մատնութեան նոր գիր, ինձ Սիբիրիա աքսորել տուեց։ Բագուի քահանայութեան խորհրդով»...

«Աստի այս ամենի համար բողոքում եմ ձեզ, սիրելի ժողովուրդ, յանուն օրինաց, որ մեռած տառ է մնացել ինձ համար, յանուն յարդարութեան, որ խայտառ վերացուած է Շամախու թեմի և Ս. Սինոդի ատեաններից իմ մասին. Ո՞ւմ դիմել, էլ ո՞ւմ բողոքել, որ լսող ու քննող չկայ. Բազմաթիւ խնդիրներով հայցել իմ տալ ինձ այն վճիռների պատճէնները, որով ինձ ամբաստանել ու պատժել են, Բայց չեն տալիս, թէև Սինոդը ստացել է ինձանից 30 ռուբլի պատճէնի փող... որոնց (զաւակացն) ա-

րիւնը պէտք է պահանջի այդ վարչութեան անագորոյն ներկայացուցիչներից «(4 և 5 էջ յառաջաբանի)։ (Մինոդս հրամանաւ յ 17 յունիսի անցելոյ ամի, թ. 1637, պատուիրեալ է դանձապահի Սարին գրել յելս ի մատենի զ 30 ռ. և առաքել առ Մեսրոպ Ա. քահանայն Տ. Ոսկանեան ի ձեռն գործակալին Բագուայ)։ «Բայց մեր հոգևոր աշխարհի սև դրօշակի իսկական երկրպագու Սահակ Վարդապետ Բաղդասարեանը...»։...«Ճամախու Թեմական առաջնորդը, բաղդախնդիրների վայրը...» (էջ 21)։ Արդեօք ո՞վ է լկտին, ես, թէ Բագուի քահանայութիւնը իւր առաջնորդով մէկ տէր» (էջ 30) «Տէր հայրը (Եղիշէ քահանայ Դեղամեան) արդէն ուսումնասիրել էր Մեսրովբ վարդապետի ինչպէս արտաքինը — երկար բոյը, նոյնպէս և ներքին ընդունակութիւնը աւելի երկար խելքն ու հանճարը, որ միայն անզուգական է առաջին և վերջինն է հայոց հոգևոր աշխարհում, ըստ որում աշխատում էր բարերարների հաշուով բարձրագոյն ուսում շարունակէ որպէս ապագայ հանճարեղ կաթուղիկոսացու» (էջ 38)։ «Արդեօք ո՞վ է լկտին, ես թէ այսքան անիրաւութիւն գործող Բագուի քահանայութիւնը և նրանց կամակից Կոնսիստորի և Սինոդի ատեանների վճիռ տուող անդամները» (էջ 91)։ «Բայց փոքրորդի ու անարդ վարդապետ Զաւէնը երախտաւոր քահանային իրա հետ հաւասար պարգևատրելը չկամենալով, գաղտնի բանսարկութիւններով բարձրագոյն իշխանութեան առաջ ղրպարտում է ինձ որպէս անարժան պարգևատրութեան։ Այս մասին Ֆագէևը իմ և Զաւէն վարդապետի ներկայութեամբ յանդիմանեց թեմական առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսին» (էջ 64)։»... Ճիւաղական միջոցներ գործ դնելով (քահանայութիւն Բագուայ), արդէն իրանց կամակից են դարձրել թէ Կոնսիստորի կազմը, թէ Սինոդի ժէնդէլմէն մասը... «(էջ 65)։ «Եթէ Կոնսիսիստորի և Սինոդի անդամները արդարութիւն և օրէնք ճանաչէին, Կաթուղիկոսի կարգադրութեան հակառակ չէին վարւի։» «Սինոդը այդպիսի անիրաւացի գաղտնի կայացած վճիռն էլ գաղտնի հաստատում

է... «(էջ 67)։»... Այսպիսի դէպքում ինչ անուն կարելի է տալ Ձեզ՝ անարդար իշխանաւորներիդ։ Արդեօք սրանից էլ աւելի փաստ է հարկաւոր, որ Կոնսիստորի և Սինոդի տեսաններում ինձ դէմ գործադրած ապօրինի վարմունքները ապացուցանէ» (էջ 68)։ Բագուի ուսումնատենչ քահանայութիւնից, Շամախուոյ թեմական ատեանից ևս Սինոդի ժէնտէլմէն կազմից սրանից էլ աւելի գործունէութիւն պահանջել կարելի չէ» (էջ 76)։ «Սական արդի բիւրօկրատ հոգևորականութեան համար մի գործակալ վարդապետի սուտ յայտարարութիւնը հարիւր անգամ բարձր է գնահատում, քան թէ հարիւրաւոր ժողովրդի փաստացի դիմումն ու իրաւացի խնդիրը» (էջ 137)։ Ահա վեց ամիս է անցել դեռ Տէր Սինոդականները ոչ մի պատասխան չեն տուել ժողովրդական խնդրին, որովհետև նրանց համար ժողովուրդը հաւասար է զրոյի, որ դրուելով իրանց արամադրութեան տակ, իրենց փառքն ու մեծութիւնն է աւելացնում և ուրիշ ոչինչ։ Հաւատում եմ, որ մօտ է այն ժամանակը, երբ այդ զրոն իւր օղակի մէջ առած, այնքան պիտի սեղմէ արդի բիւրօկրատ կղերին, որ մէջքը կոտրելուց յետոյ պիպի դէն շպրտէ իւր միջից որպէս մի անպէտքի։ Փոյթ չէ բնաւ, որ ես ահա քսան տարի է նահատակւում եմ անգթօրէն այդ կղերի անիրաւութիւնից, միայն թէ թող ժողովուրդը գիտակցութեան ասպիճանի կանգնի, որ այլ ևս զրօ չդառնայ չնչին միութիւնները բազմապատկելու համար» (էջ 138)։ Ց 8-ն ամսեանս յունուարի մտանեն ի Սինոդս յայտարարութիւնք Կոնսիստորիային Շամախուոյ ի 26 դեկտեմբերի անցելոյ ամի, թ. 1516, գործակալ Զաւէն վարդապետի ի 28-ն նոյն ամսոյ և լիազօրաց ծխականացն Մեսրոպայ Ա. քահանայի Տ. Ոսկանեանց առանց ամսաթուոյ և ամի, առաջնով Կոնսիստորիայն ի յաւելումն յայտարարութեան իւրոյ ի 5 դեկտեմբերի անցելոյ ամի, թ. 1399, առաջի առնէ զյայտարարութիւնս գործակալին Բագուայ և միաբան քահանայիցն զատահակ և զանքահանայավայել արարմանց Տ. Ոսկանեանց քահանայի հանդերձ հրատարակեալ «բողոք»

գրքուկս, խնդրելով զհնօրէնութիւն Սինոդիս առ ի զառաջս առնելոյ անպատուաբեր արարմանց և խայտառակութեանց նորա. յաւելու, եթէ ատեանն ոչ յուսալով երբէք ի դարձ և յուղղութիւն քահանային յամբարիշտ և ի գայթակղեցուցիչ ընթացիցն՝ համաձայն գտանի ընդ կարծիս գործակալին, որ վասն զրկելոյ զնա ի կարգէ քահանայութեան։ Իսկ գործակալն Բագուայ մատուցանելով զյիշատակեալ գրքոյկ Տէր Ոսկանեանց քահանային և զարձանագրութիւն մի, զկազմեալն ի 14-ն դեկտեմբերի անցելոյ ամի, վասն կատարելոյ Մեսրոպայ Ս. քահանայի առանց պատշաճ թոյլտուութեան ի նմին աւուր զպսակ մի ի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոջ, երկարապատում բանիւք նկարագրէ զպատմութիւն կազմելոյ զցուցակ ծխականաց քահանայիցն Բագուայ, զանհնազանդութիւն և զըմբոստութիւն Տէր Ոսկանեանց քահանային ընդդէմ կարգադրութեանց մերձաւոր և թեմական հոգևոր իշխանութեանց և ի վախճան բանիցն յաւելու, եթէ Տէր Ոսկանեանց քահանայն ոչ դադարի ի յաճախելոյ յեկեղեցի ի գայթակղութիւն ժողովրդեան։ Եւ յայտարարութիւն լիազօրաց ծխականացն Մեսրոպայ Ս. քահանայի ունի զայս օրինակ. «Սրա հետ ներկայանում ենք մեր ծխատէր Մեսրոպ աւագ քահանայ Տէր Ոսկանեանցի քաղաքի ծխականաց ներկայ ամսոյս 21-ին կայացած ժողովի կազմած արձանագրութիւնը և նորա բոլոր իւր ծխականներին գրքոյկը. այլ և Շամախւոյ կոնսիստորիայի ապրիլի 19-ից և մայիսի 10-ից քաղաքական իշխանութեան ներկայացրած № 442 և 558 դիմումների պատճէնները՝ նաև սրբազան Սինոդի 3-ին դեկտեմբերի № 3028 օրագրութիւնից մեր քահանային Բագու վերադարձնելու վերաբերեալ հաղորդագրութեան պատճէնն, խնդրումենք Սրբազան Սինոդին ուշադրութիւն դարձնէ նախ գրքոյկի երկրորդ մասի պաշտօնական գրութեանց թւում մեր քահանայի խնդրին յանուն թեմակալ առաջնորդի ի 11-ն հոկտեմբերի 1907 ամի երես № 137 ծխաբաժանութեան հարցի վերաբերեալ պատասխան. նոյն գրքի երես 115-ի

19-ին Նոյեմբերի № 214, որով անօրինուած է գործակալին հրաւիրել զՄեսրոպը աւագ քահանայի ի հնազանդութիւն, տալ զցուցակ ծխականաց քաղաքի յընթացս միոյ եօթնեկի, հակառակ դէպս դադարեցուցանել զնա քահանայագործութիւնից և տալ զնիթացս ծխաբաժանութեան։ Զէ որ մեր քահանայն ցուցակներ ունէր ներկայացրած յիշեալ գործակալին տեխնիքական և այբբենական կարգաւ և բացի այդ նոյն միջոցում եկեղեցեաց և դպրոցաց հոգաբարձութիւնը ամբողջ քաղաքը ցուցակագրել էր հենց այն նպատակով, որ իմացուի թէ ամեն մի քահանայ ինչքան ծուխ ունի և թէ ըստ նիւթականին որպիսի դասակարգից են ծխականները և այդ ամենը գործակալ հօր ձեռքումն է, որ կարողէր մեր քահանայի ծխականների թիւը աւելի ճիշտ իմանալ։ Եթէ կարիք կար միայն ծխաբաժանութեան գործը շարունակելու և ոչ թէ քահանայագործութիւնից դադարացնէին և ապա ծուխ բաժանէին։ Երկրորդ՝ եթէ առանց կրկնակի ցուցակի ծխաբաժանութիւն կարելի էր, ինչպէս Սրբազան հայրն է հրամայում վերոյիշեալ հրամանագրութեամբ, Ինչու անմեղ տեղից մեր քահանային դադարեցնում են քահանայագործութիւնից։ Երրորդ՝ արդէն երրորդ տարին է մտնում. ապա որն է դրանց բաժանած ծուխը, չէ թէ ծխաբաժանութիւնը լինում է արդարութիւնը և իւրաքանչիւրի իրաւացի իրաւունքը պաշտպանելու համար. Որն՞ է Շամախու Կոնսիստորիայի՝ որպէս հոգևոր Վարչութեան տարբական օրօրենաց համաձայն կատարած գործը, արդարութիւնն ու իրաւացի իրաւունքը պաշտպանած իրականութիւնը. այնէ՝ որ հակառակ մեր սուրբ եկեղեցւոյ կանոնին միլիոնատէրերի քահանաներին արտօնել են մեզ, տէր Ոսկանեանցի ծխականներիս, աւար առնել և մեր քահանայի զաւակներին թողնել մերկ ու քաղցած և անպաշտպան փողոցները թափառելիս։ Նայեցէք գրքոյկի երես 121 և մեր մայիսի 14-ից գրած բաղմատառագիր խնդիրը ընդ նմին մեզ ծխականներիս ժողովի հրաւիրելու համար առաջնորդին ներկայացրած խնդրի պատճէնը, որոնցով մենք և մեր քահանա-

ան խնդրում ենք օրինական քննութիւն սրբազան առաջնորդի և Շամախու Կոնստորիայի կազմակերպութեան դէմ։ Արդեօք ինչպէս է կատարուել այդ քննութիւնը, որ աներևոյթ է և անիմանալի նրանից և մեզանից։ Չէ թէ մեր քահանայն հեռագրական և պաշտօնական գրութեամբ այլ և մեր ծխականներիս բազմաստորագիր բողոքները սրբազան առաջնորդի և Կոնսիստորիայի առանց օրինական քննութեան կայացրած վճիռների համար էր։ Ինչու՞ Սինոդը ուշադրութիւն չդարձրեց այդ խնդիրներին, այլ հաստատեց Կոնսիստորիայի առանց օրինական քննութեան վճիռը և հրամայեց դիմել քաղաքական իշխանութեան իւր 2-ին ապրիլի № 862 կազմակերպութեամբ, որը ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ ամբաստանութիւն, որ մեր քահանային ներկայացնում են որպէս քաղաքական յանցագործի և այդ բազմաթիւ անփառաց գրպարտութիւններին վկայութիւն են բերում։ 10-ին ապրիլի մեր քահանայի իրա ծխականներին տուած այն յայտարարութիւնը, թէ և նա պատասխան էր միայն գործակալի 8-ին ապրիլի Բագու լրագրի № 43 ում հրատարակած ապօրինի յայտարարութեանը, բայց ինչ արած, որ Հայոց Հոգոր աշխարհի սրբազանագործ դատաւորները մեր զրկուած քահանայի աղաղակի արդար ու իրաւացի ձայնն էլ ժողովրդի հանգստութիւնը խանգարող ու գայթակղեցուցիչ և վտանգաւոր առարկելով, զեկուցանում են քաղաքական իշխանութեանը աքսորել, իսկ նոյն իշխանութիւնը մեր քահանայի տարապարտուց անուանարկած յայտարարութիւնը իրաւացի և արդար ճանաչելով մերժում է, հոգևոր իշխանութեան առաջարկութիւնը. անարդար համարելով նրա վճեռը մեր քահանային աքսորելու։ Այնուհետև էլ սրբազան սինոդը առանց մեր քահանայի խնդրած արդար քննութիւնը կատարեալ տալու, անհետևանք է թողում նրա խնդիրը. իւր 2-ին մայիսի № 1061 տնօրէնութեամբ և կարգադրած կրկին անգամ նրան աքսորելու քաղաքական իշխանութեան ձեռքով. արդիօք ինչ նպատակով այդ մասին իրեն քահանային չէիք յայտնում, որ առանց

մարմնաւոր իշխանութեան միջամտութեան կ'հանար Բագուից, ինչպէս և հեռացել է առանց նրան, այլ գիմել էր աւագակի քաղաքական իշխանութեան։ Արդեօք, ինչ նպատակով է գործակալ Զաւէն վարդապետը յարձակուում մեր ծխատէր աւագ քահանայի վերան եկեղեցում զգեստաւորուած, այն էլ եկեղեցու խորհրդի պաշտման ժամանակ բազմութեան ներկայութեամբ, խաչ ու աւետարանը ձեռքից խլում, մինչդեռ մեր քահանայի բարձրագոյն իշխանութեան օրինական ճանապարհով դիմումին վերաբերեալ պատասխան չէր ստացուած։ Արդեօք ինչ նպատակով Սինոդը մեր քահանայի մայիսի 14-ին № 82 խնդրի և նրա հետ ներկայացրած բժշկաց խորհրդի առուած վկայականի գործադրելու պարզ և որոշ եզանակը աղաւաղելով 17-ին յունիսի № 1535 կարգադրում է Ծիրանաւորից Հաղբատ ուղարկել նրան (տես դրքոյկի երես 127) և ինչ է պատճառը՝ որ այդ տարօրինակ կարգադրութեան վերաբերեալ մեր քահանայի բացատրութիւնը (տես գրքոյկի երես 128) Ս. Սինոդը թողնում է անպատասխան։ Եւ ինչ է պատճառը, երբ Ս. Սինոդի որոշած վեց ամսեայ աքսորի ժամանակը լրանալուն արդէն մօտեցած լինելով 22-ին հոկտեմբերի մեր քահանան մի կողմից ստիպուած իւր ընտանեկան անել դրութիւնից գալիս է Բագու, Սրբազան առաջնորդին դիմելու իւր մասին անելիք կարգադրութեան վերաբերեալ, իսկ Սրբազան հայրը նորէն աքսորել է տալիս քաղաքական իշխանութեան ձեռքով։ Վերջապէս ինչ է պատճառը, որ մեր քահանային 6 ամսի փոխարէն 8 ամիս էլ աքսորած պահելուց յետոյ դեկտեմբերի 3-ին № 3028 հրամանագրութեամբ յետ էք տալիս իւր պաշտօնավայրը դարձեալ իրաւազուրկ, չէ՞ որ Սինոդը իւր այդ տեսակի կարգադրութիւնը կարող էր մայիսի 15-ին անելու և ոչ թէ հակառակ տարրական օրինաց Ծիրանաւորից Հաղբատ ուղարկել հրամայէր և տալ այդ մասին էլ քահանայի բացատրութիւն ստանալուց յետոյ, նորէն աքսորել Երևան։ Չէ՞ որ Սինոդը իւր վճիռը Սուրբ և անփոփոխելի է համարում, ինչ է պատճառը՝ որ այդ անփո-

փոխելի վեց ամսի փոխարէն արդէն 9 ամիսն էր լրացել, իսկ Ս. Սինոդի վեց ամիս վճիռը դարձեալ անքակտելի է մնացել։ Այս ամենը երբ կատարւում է մեր աչքի առաջ, մենք այլ ևս որ և իցէ կասկած չունենք, որ մեր քահանայի հրատարակած բողոք վերնագրով գրքոյկը որ և իցէ թերութիւն ունենայ, այլ ճշմարիտ որ նա կենդանի նահատակ է և որի համար էլ մեր ձեռքը դրած մեր խղճին մեզ երախտապարտ ենք համարում՝ դիմել Ս. Սինոդին՝ խոնարհաբար խնդրելով, որ մեր բազմաչարչար քահանայի կրած հալածանքներն ու տառապանքները բաւական համարէք մեր այս խնդիրն ստանալուն պէս կարգադրէք հեռագրով, որ մեր քահանան իւր պաշտօնը վարի»

Ի զեկուցանել գործոյս անդամ Տ. Յովհաննէս Արքեպիսկոպոսն յայտնեաց՝ թէ քանզի Մեսրովբ քահանայն ընկալեալ ի Սինոդէս թոյլտուութիւն և գնալով ի Բագու պատրուակաւ վերականգնելոյ զառողջութիւն իւր՝ կատարեալ է պսակ՝ գոլով դադարեցուցեալ ի քահանայագործութենէ, ուստի հարկ է յաւելուլ զսահմանեալ արդէն պատիժն, առաքելով ի վանս Սևանայ հնգամեայ ժամանակաւ։ ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. ունելով առաջի աչաց, զի Մեսրովբ քահանայն Տէր Ոսկանեան յընթացս ամաց բազմից անվայել ընթացիք և գայթակղեցուցիչ և ըմբոստ արարմամբք նսեմացուցանելով զքահանայական կոչումն՝ ոչ ճանաչէ զիշխանութիւն, չկատարելով զկրկանի պատուէրս որպէս թեմական իշխանութեան, նմանապէս և Սինոդիս, և ոչ յուսալով այլևս ածել զնա ի կարգ և յուղղութիւն՝ ուստի առնել զնա կարգալոյծ, հանելով զանուն նորա ի ցուցակէ հոգևորականաց։ ի կատարումն վճռոյս տալ հրաման Առաջնորդի Թեմին Շամախւոյ, տալ տեղեկութիւն Կոնսիստորիային Շամախւոյ, պատուիրելով տնօրինել զհովուութենէ ծխականաց Տէր Ոսկանեանի, և ծանուցանել Նահանգապետին Բագուայ ի գիտութիւն. Զպատճէն օրագրոյս առաքել առ խմբագիր «Արարատ» ամսագրի ի տպագրութիւն.

(Նախականի վրայ ստորագրել է Սինոդի ամբողջ կազմը)